

ԹԻԼ 27895
Յուլիս 7, 1981

Մեծայարգ
Տիար Մ. Ալիխանեան
Վերժինիա.

Յարգելի Տիար Ալիխանեան,

Ստացած ենք հայրենաբնակ ձեր եղբօր կողմէ պատրաստուած Ս. Էջմիածին
Մայր Տաճարի մանրատիպին լուսանկարը:

Վստահ ենք որ ընդառաջելով ձեր փափաքին՝ ձեր եղբայրը իր պատրաստած
ձեռակերտը պիտի փոխանցէ Ս. Էջմիածին:

Երբ Վեհափառ Հայրապետէն իմանանք որ ստացած է, անմիջապէս կը տեղե-
կացնենք ձեզի եւ կը ջանանք թելադրուիլն մը ներկայացնել ձեր ընելիք
կարգադրութեան կապակցութեամբ:

Եր գնահատենք Ս. Էջմիածնի հանդէպ ձեր ցուցաբերած հետաքրքրութիւնը,
եւ ձեզի ու ձեր պարագաներուն կը մաղթենք առաւել քաջաողջութիւն եւ
երկար կեանք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ
Առաջնորդ